ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/28, 14.02.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Խաչպար» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կետրոն ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/23» գնանշման հարցում

Գնման առարկան՝ Բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ Պարտավորեցնել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կետրոն ՓԲԸ-ի «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/23» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ.ԱՆԱՆԻԿՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԲՈՂՈՔ

1) Բողոք բերող անձ՝ <<Խաչպար>> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ռաֆֆու 33/7
2) Պատվիրատուի անվանումը՝ <<Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ>> ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Նոր Նորքի 3-րդ մ/շ, Գյուրջյան փ. 10 շենք

3) Գնանշման հարցման ծածկագիրը՝ « ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/23»
և առարկան՝ <<Բժշկական նշանակության ապրանքների ձեռք բերում>>

4) Վեճի առարկան և բողոք ներկայացնող անձի պահանջը՝

Տեղեկացնում ենք Ձեզ, որ <<Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ >> ՓԲԸ-ն <<Բժշկական նշանակության ապրանքների>> ձեռքբերման նպատակով Հայտարարություն է հրապարակել <<ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/23>> ծածկագրով գնանշման հարցման մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2020թ. փետրվարի 10-ի թիվ 1 որոշմամբ՝ (կից փաստաթուղթ թիվ 1), որի Հրավերով պահանջվում են թվով 4 չափաբաժիններով ապրանքներ(կից փաստաթուղթ թիվ 2):

Պատվիրատուն կատարելով գնումների գործընթացները կարգավորող իրավական ակտերով սահմանված պահանջների մի մասը՝ Հայտարարության տեքստը հրապարակել է նաև ռուսերեն լեզվով, սակայն չի կատարել այդ նույն իրավական ակտերով սահմանված պահանջների մյուս մասերը՝ ռուսերեն լեզվով չի հրապարակել նաև Հրավերի տեքստը:

<<Խաչպար>> ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ <<Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ >> ՓԲԸ-ի <<ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/23>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2020թ. փետրվարի 10-ի թիվ 1 որոշմամբ հաստատված՝ <<Բժշկական նշանակության ապրանքների>> ձեռքբերման նպատակով հայտարարված <<ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/23>> ծածկագրով գնանշման հարցման Հրավերի ընթացակարգը, և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է Ձեզ՝ ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝

Ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի՝ <<Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ>> ՓԲԸ-ի <<ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/23>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ <<ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/23>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել չկայացած:

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝

ա) Համաձայն ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի՝

<<3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:>>

բ) Համաձայն ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի՝

<<1. Գնմանը վերաբերող փաստաթղթերը կազմվում և սույն օրենքով նախատեսված դեպքերում տեղեկագրում հրապարակվում են հայերեն, իսկ գնումների, այդ թվում՝ նախաորակավորման հայտարարությունները՝ նաև անգլերեն և ռուսերեն:>>

գ) Համաձայն ՀՀ Կառավարության թիվ 526-Ն Կարգի 34-րդ կետի 1-ին ենթակետի՝

<<1) գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման մասին հայտարարության տեքստերը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում հայտարարության և **հրավերի տեքստերը**, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, պայմանագիր կնքելու, կնքված պայմանագրի և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունները **հրապարակվում են նաև ռուսերեն լեզվով:>>**

<<Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ >> ՓԲԸ-ի <<ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/23>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի կողմից չեն կատարվել վերոգրյալ իրավական ակտերի պահանջները՝ Հրավերի տեքստը չի հրապարակվել նաև ռուսերեն լեզվով:

6) Կից ներկայացնում եմ բողոքարկման վճարի անդորրագիրը:

Առդիր՝ 2 թերթ:

<<Խաչպար>> ՍՊԸ տնօրեն՝ Սմբատ Բալասանյան

14 դեկտեմբերի 2020թ.

E-mail: khachpar.llc@gmail.com
Հեռախոս՝ 091-45-90-45
<<Ինեկոբանկ>> ՓԲԸ, հ/հ 2050922055871001